

մէկ՝ Մաթոս աղային Իգմիր եւ մին՝ Եղիա վարդապետին ի Հռոմ վասն Տէր Կոմիտասի աղային՝ թէ զնա անդ, վասն արգիլելոյ զնա» (Օրագր. անդ):

Տէր Կոմիտասի երկու աղջիկներու անուները կը ֆնան անձանօթ: Անոնցմէ երէցը եղած է շարականազէտ. այս մասին Ամգեցի կը գրէ. 1691 «Հոկտ. ԻԵ, օրն Կիրակէ Քաչգիւտին. երեկոյս Կոմիտասի աղջիկն շատ շարական ասաց. մէկ ոսկի տուի իւրն» (Թղ. 151բ): Կրտսերը կը վախճանի 1699 Փետր. 21ին. «Կոմիտասի փոքր աղջիկն մեռաւ» (Թղ. 231ա):

Ամգեցիի Օրագրութեան կը քաղենք Կ. Պոլսոյ մէջ գրուած հետեւեալ հատուածները, որոնց մէջ Տէր Կոմիտասի անունը յիշուած է:

1691 Փետր. 19 (Տօն Վարդանանց). «Կովիսան (բերաւ) շապիկ և մահրամա աղջկոյն և փախլազայ, Երեմիան (Չէլէպի)՝ բախի եւ մէզէ» (Թղ. 143բ): — Սեպտ. 3. «Տէր Կովիսան մին Տօնացոյց ընծայ» (Թղ. 150ա): — Հոկտ. 1. «Հաց վաղվնէս ընդ Կովիսախն» (Թղ. 151ա): — Դեկտ. 27. «Տէր Կովիսան զինի եւ սուճուխ (երբեր)» (Թղ. 154ա): — 1698 Նոյ. 4. «Գիշերս պատրիարդին (Մեղքիսեղեկ Սուպրի) և Արապլոնին և Տէր Կովիսախն հետ Գ սահաթ նստաք վասն մեր բանին և եղև» (Թղ. 229ա): — Նոյ. 11. «Մեք ընդ մերոցն՝ Կովիսախն և Եղիային և Տէր Քաչատու-

պին, որով անոր աթոռ բարձրանալը կը շնորհաւորէ ու մասնաւորապէս կը յանձնարարէ սոյն Եղիա վարդապետը և Երեմիայի կրտսեր որդի Մաղաքիան, որոնք կ'ուզեորէին Սպանիա և Իտալիա, ու այդ գիրը պապին զրկած է Պետրոս անուն լատին կրօնաւորին միջոցաւ (Սաւալան, էջ 662): Ամգեցի ի Կ. Պոլիս իր Օրագրութեան մէջ նոյն թուականով կ'արձանագրէ այսպէս. «Պատրի Պետրոսն եկաւ ընդ թաշատուր վարդապետին, զի գնալոց է ի Հռոմ. զրուց շատ եւ գիր ետու փափին համար» (Թղ. 246բ):